Digitally signed by ARSENYAN ARMINE 7510650178
Date: 2023.09.15 16:32:44 AMT

Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով փոխտնօրենի աշխատանքների տարեկան հաշվետվություն
<<Ջերմուկի կրթահամալիր>>
2022-2023 ուս.տարի

անուն, ազգանուն , հայրանուն	Մարո Վիլսոնի Մարգարյան
կրթությունը	բարձրագույն
Դպրոցի աշակերտների թիվը	462-405
Աղջիկների թիվը	190
Տղաների թիվը	215
Ներառական կրթություն ստացողների թիվը	22

1.Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ.

I.ԴԱՍՂԵԿՆԵՐ

1.Դասղեկների աշխատանքային պլանների մշակման վերահսկում և ներկայացում հաստատման:
2.Դասղեկներ հետ ձևավորվել է սոցիալապես անապահով, որբ և միակողմանի ծնողազուրկ երեխաների ցուցակը,ներկայացվել է տնօրենին և հնարավորության սահմաններում ապահովվել են անվճար դասագրքերով:
3.Վերահսկողություն է սահմանվել դասղեկների կողմից իրականացվող միջոցառումներին,օգնել և աջակցել եմ կազմակերպչական հարցերում:
4. Վերահսկողություն է սահմանվել դասղեկների կողմից հրավիրված ծնողական ժողովների աշխատանքներին,անմիջական մասնակցություն եմ ունեցել այդ աշխատանքներին:
5.Դասղեկի ժամերը գրվել է դասացուցակում:Կատարվել է դասղեկի ժամերի մշտադիտարկում:
6. Հետևողական աշխատանք է տարվել, որպեսզի դասղեկի ժամերը ծառայեն երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին;
7.Դասղեկների հետ հստակեցվել է խնդրահայույց երեխաների ցանկը:
8.Կազմվել է ուսումնական տարվա ընթացքում դասղեկների կատարած աշխատանքների հաշվետվություն:
9. Դասղեկների հետ հստակեցվել է աշակերտների ամենօրյա հաճախումների ցանկը,բացահայտվել են բացակայությունների պատճառները:

II.ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

1.Կատարվել է դասալսումներ դասի դաստիարակչական կողմը գնահատելու նպատակով;
2.Անցկացվել են խորհրդատվություններ նվիրված դասալսումների վերլուծությանը:
3.Կատարվել է առարկայական միջոցառումների վերահսկողություն,օգնություն նաջակցություն է ցուցաբերվել աշխատանքում:
4.Կազմվել է հերթապահության ցուցակ:Վերահսկվել է ուսուցիչների հերթապահական աշխատանքը հարկերում և բուֆետում:
5.Սկսնակ ուսուցիչներին մեթոդական օգնություն է ցուցաբերվել դասալսումների,սեմինարների և բաց դասերին մասնակից դարձնելու միջոցով:

III.ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

1.Կազմակերպչի տարեկան աշխատանքային պլանը համատեղ մշակվել և ներկայացվել է հաստատման:
2.Կատարվել են ԱԽ-ի աշխատանքների համատեղ պլանավորում և վերահսկում:

2.Աշխատանք ներառական կրթության բազմամասնագիտական թիմի հետ

1.Կատարվել է ներառական կրթության բազմամասնագիտական թիմի աշխատանքների տարեկան պլանի քննարկում.

ա / սոցիալական մանկավարժի աշխատանքային պլան,
բ/ հատուկ մանկավարժի աշխատանքային պլան,
գ/ դաստիարակ- մանկավարժի աշխատանքային պլան,
դ/ հոգեբանի աշխատանքային պլան,
ե/ համակարգողի աշխատանքային պլան,

2. Տարվա ընթացքում դպրոցում անցկացված միջոցառումներում ընդգրկվել են նաև ԿԱՊԿՈՒ աշակերտներ:

3. Ներառական կրթության բազմամասնագիտական թիմի հետ միասին կազմակերպվել են միջոցառումներ,որտեղ ակնհայտ է ԿԱՊԿ ունեցող աշակերտների ինտեգրումը :

ա/ <<Մասնագիտական կողմնորոշում>> միջոցառումը ԿԱՊԿ ունեցող աշակերտների մասնակցությամբ:
բ/ Նեկայացվել է <<Կիկոսի մահը>>բաց դաս –բեմադրությունը(առաջին օգնությունը սիրտ-անոթային անբավարարության ժամանակ),կատարվել է վերլուծություն և քննարկում:

3.Աշխատանք աշակերտների հետ

1.Աշխատանք է տարվել աշակերտների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ.

ա/ բաց դասղեկի ժամերի միջոցով,
բ/ սովորողների վարքի կանոնների համատեղ մշակում և հրապարակում,
գ/ կազմակերպվել և անցկացվել են սեմինարներ և միջոցառումներ:

դ/Կազմակերպվել և անցկացվել են ֆլեշմոբ նվիրված<< COVID-19>>,<<Ապրիլյան քառօրյա պատերազմ>>, <<Մեծ եղեռն>> թեմաներով:

2. Հստակեցվել են սոցիալապես անապահով երեխաների ցուցակը,որոնց համար կատարվել են դասագրքերի գների զեղչեր

3. Ըստ աշակերտական խորհրդի կանոնադրության դպրոցի տնօրենի,կազմակերպչի հետ միասին՝

ա/ հրավիրվել է ընդհանուր աշակերտական ժողով,
բ/ աջակցություն է ցուցաբերվել դասարանական խորուրդների ձևավորման աշխատանքներին,
գ/ աջակցություն է ցուցաբերվել աշակերտական խորուրդների ձևավորման աշխատանքներին,
դ/ աջակցություն է ցուցաբերվել աշակերտական խորհրդի նախագահի ընտրության աշխատանքներին,
ե/ օգնություն է ցուցաբերվել աշակերտական խորուրդների ժողովների կազմակերպման և անցկացման աշխատանքներին:
զ/ օգնել և վերահսկվել է աշակերտական խորհրդի կողմից միջոցառումների կազմակերպման աշխատանքները:

4. Կատարվել է անցանկալի վարք ցուցաբերող երեխաների հաշվառում:
5. Կատարվել է անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն և համապատասխան աշխատանքի պլանավորում:
6. Աշխատանք է տարվել հակահիրավական և հանցագործ վարք ունեցող երեխաների հետ:Անցանկալի վարք ունեցող երեխաների հետ աշխատանքները կատարվել են դպրոցի տնօրենի,դասղեկների,ոստիկանության անչափահասների գործերով աշխատակցի, ծնողների անմիջական մասնակցությամբ:
7. Հետևողական աշխատանք է տարվել ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսումնադաստիարակչական ,սննդի կազմակերպման, հանգստի և ժամանցի կազմակերպման աշխատանքներին:

4.Աշխատանք ծնողների հետ

1.Կազմակերպվել և անց է կացվել համադպրոցական և դասարանական ծնողական ժողովներ:
2.Ըստ անհրաժեշտության կազմակերպվել է հանդիպումներ ծնողների հետ:
3.Տնօրենի հետ համաձայնեցնելով նշանակվել է բաց դռների օր և հետևողական աշխատանք տարվել ծնող-դպրոց կապի ամրապնդման աշխատանքներում:
4. Կազմվել և անցկացվել է ծնողների հետ զեկույցների և զրույցների թեմաները :

5.Տնօրենի,դասղեկների հետ միասին աշխատանք է տարվել անցանկալի վարք ունեցող երեխաների ծնողների հետ:
6.Ապահովվել է ծնողների մասնակցությունը դպրոցի արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին:
7.Ապահովվել է ծնողների մասնակցությունը դժվար դաստիարակվող երեխաների հետ տարվող աշխատանքներում:

5.Աշխատանք ղեկավար և սպասարկող անձնակազմի հետ

I.ՏՆՕՐԵՆ

1.Աշխատանքային պլանները ներկայացվել է քննարկման և հաստատման:
2.Կատարվել է ընթացիկ հանձնարարականները և աշխատանքները:
3. Համագործակցություն է ցուցաբերվել բոլոր կատարված աշխատանքներում:

II.ՈՒՍՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ ՓՈՒՏՆՕՐԵՆ

1.Համաձայնեցվել և պլանավորվել է դասալսումները:
2.Համաձայնեցվել է ներառական կրթության բազմամասնագիտական թիմի հետ կատարվող աշխ
3.Համաձայնեցվել է մեթոդ միավորումների հետ տարվող աշխատանքներում:

III.ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԾՈՎ ՓՈՒՏՆՕՐԵՆ

1.Համագործակցվել է դպրոցի նյութատեխնիկական բազայի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում:
2.Համագործակցվել է դպրոցի գույքի և մաքրության պահպանման ուղղությամբ տարվող աշխատանքներում:

IV.ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՀԵՏ

1.Գրադարանավարի հետ միասին կազմվել և հստակեցվել է դասագրքերի բաշխման ցուցակը ըստ դասարանների:
2. Գրադարանավարի հետ միասին կազմվել և հստակեցվել է դասագրքերի հանձնման ցուցակը ըստ դասարանների:

3. Գրադարանավարի տարեկան աշխատանքային պլանը կազմվել և ներկայացվել է հաստատման:
4.Համատեղ մշակվել է միջոցառումների պլան.
ա/<<Սիրում եմ քեզ հայոց լեզու>> միջոցառման վերլուծություն ,քննարկում և անցկացում:
բ/Պատի թերթ<<Եղիշե Չարենց>> խորագրով:
գ/ Միջոցառում <<Բարի գալուստ գրադարան>> վերնագրով:

6.Աշխատանք արտադասարանական խմբակների հետ

1.Համակարգվել և վերահսկվել է կերպարվեստի խմբակի աշխատանքները:
2.Խմբավարների հետ միասին կազմակերպվել է խմբակի տարեկան հաշվետվություն՝ցուցահանդեսներ:
3. Համակարգվել և վերահսկվել ֆիահկայի խմբակի աշխատանքները:

7.Աշխատանք պետական և հասարակական կառույցների հետ հետ

I.ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՇԽԱՏԱԿԻՑ

1.Ոստիկանության անչափահասների գործերով աշխատակցի հետ համատեղ կազմվել է զրույցների և սեմինարների թեմաները:
2.Համագործակցվել է անցանկալի վարք ունեցող երեխաների և նրանց ծնողների հետ տարվող աշխատանքներում:
3.Համատեղ անցկացվել են սեմինարներ:

II.ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

1.<<Արմաթ>>ինժեներական լաբորատորիայի գործունեությունը Ջերմուկի կրթահամալիրում:

Մարտ,ապրիլ և մայիս ամիսների միջոցառումները անցկացվել են հեռավար,ֆլեշմոբերի տեսքով: